



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Գաբրիելյանը, Արտակ Գևորգյանը, Վահե Լևոնյանը, Գեղամ Վարդանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Վարդանյանը, Գետափ բնակավայրի վարչական ղեկավար Լևոն Սաֆարյանը, Գլաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Նաիրի Հովհաննիսյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Մովսիսյանը:

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը:

Լսեցին.

**ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 8 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի թիվ 8 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Գլաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

3. Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրին մասնակցելու համար Հայաստանի Տարածքային Զարգացման հիմնադրամին դիմելու մասին:

4. «Քո ուղին Գլաձոր համայնքում» ծրագրի շրջանակներում ներդրում կատարելու համար թույլտվություն տալու մասին:

5. Գլաձորի համայնքապետարանի միջոցներով ձեռք բերված բազալտե սալիկները զոհվածների պանթեոնների շինարարական աշխատանքներում օգտագործելու համար թույլտվություն տալու մասին:

6. Շվեյցարիայի զարգացման գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության կողմից Հայաստանի համայնքներին՝ ԿՈՎԻԴ-ով պայմանավորված դժվարություններին դիմագրավելու համար հայտարարված դրամաշնորհային ծրագրին մասնակցության հայտը հաստատելու և ծրագրի շրջանակներում գումար ստանալու նպատակով արտաբյուջետային հաշիվ բացելու համար համաձայնություն տալու մասին:

7. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 9-ի թիվ 69 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

8. Գլաձոր համայնքի մի քանի բնակիչների դիմումները քննարկելու և ֆինանսական օգնություն տրամադրելու մասին:

9. Գլաձոր համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը հաստատելու մասին:

10. Համայնքապետարանին պատկանող ELAZ-BL880 մակնիշի էքսկավատորով Գլաձոր բնակավայրի դպրոցի տարածքում հիմնված ինտենսիվ այգում իրականացվող աշխատանքներն անհատույց կատարելու և օգտագործվող դիզելային վառելանյութը նվիրաբերելու համար թույլտվություն տալու մասին:

11. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի «Բելուք տեղ» կոչվող հանդամասի մայր առվի կողքը գտնվող կիսաչոր բարդիները հատելու և քամու հետևանքով Գետափ բնակավայրում կոտրված թթենին համայնքի սոցիալապես անապահով բնակչի ընտանիքի տրամադրելու համար թույլտվություն տալու մասին:

12. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող «ԹԱՎԻԹԻԱՆ ՎԻՆՅԱՐԴՍ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության վարելահողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին: